

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 02)

19 փետրվարի 2016թ.

Ժամը՝ 15⁰⁰

իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱԿ/ՁԻԱԿ-ին հակազդման ազգային» ծրագրի մասին:

(Ելենա Ամիրխանյան)

11. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին

(Արման Բարխուդարյան)

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի ոռոգման համակարգի կառուցում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)
2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնի կահավորում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)
3. «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին:
(Նաիրա Մելիքյան)
4. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքը 12 բնակարանի վերակառուցման» ծրագրի մասին:
(Հրահատ Ստեփանյան)
5. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Մովսես գյուղում խաղաղաշուրի կառուցում» ծրագրի մասին:
(Գևորգ Պապիկյան)
6. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագրի մասին:
(Վահե Ավագյան)
7. «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն մանկական հաստատություններում և ցերեկային կենտրոններում գտնվող ծնողազուրկ ու ֆիզիկական, մտավոր արատներ ունեցող երեխաներին» ծրագրի մասին:
(Ռիփսիմե Մուրադյան)
8. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2016 թվականի ընթացքում իրականացվող «Պարբերական հիվանդության երեխաների անվճար բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործական ծրագրի մասին:
(Ալիսա Բադայան)
9. «Լաշ» եզդիների Ազգային միավորում հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին:
(Անդրանիկ Արթենյան)
10. «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2016-2016 թվականների ընթացքում

- 11.1 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 11.2 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 11.3 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 11.4 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին N 1:
- 11.5 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին N 2:
- 11.6 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 11.7 «Հայաստանի թեմիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 11.8 «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 11.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 11.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):
- 11.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ

հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ) N 1:

- 11.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բերեգործական հիմնադրամ):
- 11.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

12. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Արման Բարխուդարյան)

- 12.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-857-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):
- 12.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ):
- 12.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):
- 12.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 2 («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):
- 12.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 12.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-916-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):
- 12.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1339-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրին հարակից գործարքի մասին (ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

- 12.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Վայրի քնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ):
- 12.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-930-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)):
- 12.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):
- 12.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

13. Այլ հարցեր

- 13.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-072-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 13.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1370-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ):
- 13.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-003-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն):

ԱՆԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
փետրվարի 2016 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

2/1

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԱՂԱՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 07/80-2/-16 և փետրվարի -ի N 06/3-3/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 02/14/-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 02/14/-16 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի փետրվարի -ի N 01/10.1-1/-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 39,610,151 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի ոռոգման համակարգի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գայսաթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03313002) 2016 թվականի հունվարի 25-ին կնքված N ՀՀ/Ջ-2/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ոռոգման համակարգի կառուցում՝ 38,840,151 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ԳԻԴԷՊԻՆՎԵՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02518022) 2016 թվականի հունվարի 25-ին կնքված N ՀՀ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողություն՝ 230,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՇԻՆԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03300044) 2016 թվականի հունվարի 25-ին կնքված N ՀՀՏՀ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման տեխնիկական հսկողություն՝ 540,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված

ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:



**«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի
ոռոգման համակարգի կառուցում»**

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս համայնքի հողատարածքները ոռոգման ջրով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործի	Անհատ բարեգործներ /Ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, կառավարական տուն N 3, ՀՎՀՅ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս գյուղ, ջրամատակարարման բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 39.610.151,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Բաղանիս գյուղի համայնքը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հունվարի 25 -ից մինչև 2016թ. սեպտեմբերի 25-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական	2016թ հունվարի 25 -ից մինչև 2016թ. սեպտեմբերի 25-ը շինարարական աշխատանքների կատարում՝ 38.840.151,00

2/1

	միջոցների ծավալը	դրամ արժողությամբ, հեղինակային հսկողության իրականացում՝ 230.000,00 դրամ, տեխնիկական հսկողության իրականացում՝ 540.000,00 ՀՀ դրամ:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) արտադրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Գայաթ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս գյուղի ոռոգման համակարգի կառուցում՝ 38.840.151,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի «ԳԻՂԴՊԻՆ-ՎԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս գյուղի ոռոգման համակարգի կառուցման հեղինակային հսկողություն՝ 230.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի «ՇԻՆԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 540.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամիսիկ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդակցան
Արմինա Դարբինյանը

2/1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

2/1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

11.02.2016թ. № 07/80-2/4666-16

Ձեր № _____

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.02.2016թ. N 15/15.1/1638-16 գրության՝ կապված «ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի ոռոգման համակարգի կառուցում» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

034/3604-16

11.02.2016թ.



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/4791-16
11.02.2016թ.

2/1

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 09.02.2016թ. N15/15.1/1638-16 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի ոռոգման համակարգի կառուցում» «ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրոյան

ԳԱՀՄ բաժին, Ն.Քեժակյան
011-800-329

034/3625-16

11.02.2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41^ա, հեռ.380-385
Էլ. փոստ vigen.kocharyan@justice.am

10.02.2016_բ N 03/14/13 ՎԲ-16
Ձեռ N _____

2/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 9-ի 15/15.1/1638-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի ոռոգման համակարգի կառուցում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող՝ Ալլա Մտեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/380-227

035/3464-16
10.02.2016_բ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

2/1

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
0054, Երևան, Давидашен 4, ул. А. Микояна 109/8
109/8, А. Mikoyan str., Davidashen 4, Yerevan 0054
Հեռ./Տեղ./Տեղ. (+374 10) 31 77 02
Ֆաքս/Փաքս/Fax (+374 10) 36 34 49
Էլ. փոստ / E-mail: mes@mes.am

N 1/32.2/1704
12.02.201 թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
Ս. Տեր-Սիմոնյանին

Ձեռ՝ 09.02.2016 թվականի
թիվ 15/15.1/1638-16 գրության կապակցությամբ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի ոռոգման համակարգի կառուցում» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ ՏԿԱԻ նախարարությունը դիտորդություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Ա.Երիցյան

Կապարող՝ Ս. Խաչատրյան
Հեռ.՝ 010-51-13-49

02/3812-16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, РА, Іјеван Сагманадрутян 1
hbn.tel.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս^а /факс, fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.mtaes.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
փետրվարի 2016 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

2/2

10.02.2016թ
01/21.0/799-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԼԵՆԻՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ
ԿԱՐՄԻՐ ՇՈՒԿԱ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան
Ի պատասխան Ձեր 09.02.2016թ. թիվ 15/15.1/1638-16 գրության հայտնում եմ, որ
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի
Հանրապետության Տավուշի մարզի Բաղանիս համայնքի ոռոգման համակարգի կառուցում»
ծրագրի որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Տավուշի մարզպետարանում շահագրգիռ
կողմերի մասնակցությամբ և արժանացել հավանության:

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 07/80-2/-16 և փետրվարի -ի
N 06/3-3/-6 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
2016 թվականի փետրվարի -ի N 02/14/-16 եզրակացությունները, որոշում է.

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից
իրականացվող՝ 14,508,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լենինային Ղարաքաղի
Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնի
կահավորում» ծրագիրը (կցվում է):

Հարգանքով

Հ. ԱՐՈՎՅԱՆ

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման
նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝
ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի փետրվարի 5-ին կնքված
N ԼՂ-ԿՀ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի
անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և
տեղադրում Լենինային Ղարաքաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա
գյուղի համայնքային կենտրոնում՝ 14,508,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված
ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Լենինային Ղարաքաղի
Հանրապետության կառավարություն:

119/3527-16
10.02.2016թ



«Հայաստան» համահայկական
 Վարչապետության նախարարի գործադիր տնօրեն
 Արա Վարդանյան

«08» փետրվարի 2016թ.

«ԸՆԴՀ Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնի կառավարում»
 ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնը անհրաժեշտ կառույցով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Ամիատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձիք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղ, Մարտունու շրջան, Կարմիր Շուկա գյուղ, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 14.508.000,00 դրամ:

2

7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ փետրվարի 05-ից մինչև 2016թ.սեպտեմբերի 05-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնի կառավարում 2016թ փետրվարի 05-ից մինչև 2016թ.սեպտեմբերի 05-ը ընկած ժամանակահատվածում:
10.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցամաքի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ ամիստույց տեղադրում՝ 14.508.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամիսիկ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
 տնօրենի խորհրդակցական
 Արմինա Դարբինյանը

2/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

2/2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

11.02.2016թ. № 07/30-2/4667-16

Ձեր № _____

«Հատավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.02.2016թ. N 15/15.1/1639-16 գրության՝ կապված «Հատավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

034/3561-16
11.02.2016թ.



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

06/3-3/5283-16

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

15.02.16թ.
2/2

«Հատավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 09.02.2016թ. N15/15.1/1639-16 գրությանը կից ներկայացված ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնի կահավորում» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Սիրոմյան

ԳՎՀՄ բաժին, Ն.Քեմալյան
011-800-329

034/3961-16
15.02.2016թ.



2/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— հունվարի 2016 թվականի N Մ- քաղ. Երևան

-U 2/3

0078, Երևան, Հայաստան 41^ա, հեռ.380-385
Էլ. փոստ vigen.kocharyan@justice.am

10.02.2016թ. N 03/14/1349-16
Ձեռ N _____

«ՀՐԱՅՐ ԵՎ ԱՆՆԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՄԱՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿ ԽՈՒՐԲ ԱՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի -ի N 07/80-2/-16 և հունվարի -ի N 06/-/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի -ի N 02/14/-16, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2016 թվականի հունվարի -ի N 05/14.1/-16, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2016 թվականի հունվարի -ի N 06/18.1/-16 եզրակացությունները, որոշում է:

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 9-ի 15/15.1/1639-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի համայնքային կենտրոնի կահավորում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

1. Բարեգործական որակել «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2^ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) իրականացվող՝ 70 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագիրը (կցվում է):

2. «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող՝ Ալյա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. / /010/380-227

035/3472-16
10.02.2016թ.

ՀՀ, Երևան
 «Հրապր և Աննա Հովհաննիսյան Հիմնադրամ»
 Ֆաունդեյշն Կորպորացիայի մասնաճյուղ
 /տեղափոխված Գրողային կոլեկտիվի կողմից
 The Hrair and Anna Hovhannissian Foundation Branch
 01555988

«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՏՐԱՏԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՎԱՅՈՒՄ»
 Օ Ր Ա Գ Ի Ի

1. Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի Արոյան 15 հասցեում գտնվող 12-13-րդ դարերում կառուցված կաթոլիկ Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի իրականացման արդյունքում, հնարավոր կլինի վերականգնել, եկեղեցու տեսք և երկարաճեղ կաթոլիկ Սուրբ Աստվածածնի կյանքը և Երևանում գտնվող այս եզակի պատմական հուշարձանը դեռ երկար տարեներ կիրառելի կլինի քանի որ համաքաղաքացիներին և թե մեր քաղաքի իյուրերին:
3. Բարեգործը	Օգովելի Հայաստանի Հանրապետության խորվերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
4. Ծրագրի կատարողը	«Հրայր և Աննա Հովհաննիսյան Ֆաունդեյշն» կորպորացիա (հասցե՝ One Hovhchild Plaza, 4000 Route 66, Tinton Falls, New Jersey 07753, USA):
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Հրայր և Աննա Հովհաննիսյան Ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ (հասցե՝ Թամանյան փողոց 2# շենք, բնակարան 2, ԳՎՀՀ 01555988)
6. Ծրագրի բյուջեն	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արոյան 15: Բնագավառը՝ հոգևոր:
7. Բարեգործություն ստացող	70,000,000 դրամ:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Հայ Առաքելական Եկեղեցի:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսաճշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի նախատեսվում է իրականացնել 2016 թվականի մարտի 1-ից մինչև 2017 թվականի մարտի 31-ը: Ծրագիրն իրականացվելու է վեց փուլով: Առաջին փուլ - նախագծային աշխատանքներ, ժամկետ՝ 2016թ. մարտ - 2016թ. ապրիլ, նախատեսվում է 1,000,000 դրամ, Երկրորդ փուլ - քանոնան աշխատանքներ (տարածականների կապում և քանոնան վերադրի տու. ֆե հովհարում, ծածկի ծածկապատերի քանոնան-հեռացում; հին լիցքերի քանոնան-հեռացում; լանջերի և ենթաբեկուկային ցառանկայան ցածրանկայան քանոնան-հեռացում; առանց պորֆիլների իրականացված քիվերի քանոնան-հեռացում; շին աղբի բարձրում և տեղափոխում արքայախոյ, ժամկետ՝ 2016թ. ապրիլ - 2016թ. հուլիս, նախատեսվում է 6,000,000 դրամ,

2/3

2

10. Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծախսարկունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը:	<p>Երրորդ փուլ - քաղաքային աշխատանքներ (վերադրի քիվերի քիվերի քիվերի նոր տաշ ու շար միակտուր տու. ֆե քարերից; վերադրի բարդ պորֆիլայր քիվերի նոր տաշ ու շար: վերադրի անկյունով կտրվող տու. ֆե ծածկապատերի նոր տաշ ու շար: ծածկապատերի տակ բարդ կրաշաղախով լիցքերի կատարում; վերադրի կող ծածկապատերի նոր տաշ և շար: կրաշաղախով լիցքերի իրականացում; տամիքածածկերի տու. ֆե ծածկապատերի նոր տաշ և շար: քանոնվող քիվերի քանոնան-վերաշարում; կրաշաղախով նոր լիցքերի կատարում), ժամկետ՝ 2016թ. մայիս - 2016թ. հոկտեմբեր, նախատեսվում է 37,000,000 դրամ,</p> <p>Չորրորդ փուլ - կրաշաղախի սրված աշխատանքներ և պատերի կարմունների կարմանացում, ժամկետ՝ 2016թ. սեպտեմբեր - 2016թ. նոյեմբեր, նախատեսվում է 15,000,000 դրամ,</p> <p>Հինգերորդ փուլ - Եկեղեցու կվեցում ներսից և դրսից, պատուհանների և դռների պատրաստում և տեղադրում, ժամկետ՝ 2016թ. հոկտեմբեր - 2016թ. դեկտեմբեր, նախատեսվում է 6,500,000 դրամ,</p> <p>Վեցերորդ փուլ - դարձնագործ խաչի, դարձնագործ քանի և դասի դարձնագործ ձարի պատրաստում և տեղադրում, ժամկետ՝ 2017թ. հունվար - 2017թ. մարտ, նախատեսվում է 4,500,000 դրամ:</p> <ol style="list-style-type: none"> 1. Աստվածային աշխատանքներ 1,000,000 դրամ, 2. Տեխնիկական և հեղինակային վերահսկողության աշխատանքներ՝ 6,000,000 դրամ, 3. Քանոնան աշխատանքներ (տարածականների կապում և քանոնան; վերադրի տու. ֆե հովհարում, ծածկի ծածկապատերի քանոնան-հեռացում; հին լիցքերի քանոնան-հեռացում; լանջերի և ենթաբեկուկային ցառանկայան քանոնան-հեռացում; առանց պորֆիլների իրականացված քիվերի քանոնան-հեռացում; շին աղբի բարձրում և տեղափոխում արքայախոյ) 4,000,000 դրամ, 4. Վերադրի և թմբուկի քարային աշխատանքներ (վերադրի քիվերի քիվերի քիվերի նոր տաշ ու շար միակտուր տու. ֆե քարերից; վերադրի բարդ պորֆիլայր քիվերի նոր տաշ ու շար: վերադրի անկյունով կտրվող տու. ֆե ծածկապատերի նոր տաշ ու շար: ծածկապատերի տակ բարդ կրաշաղախով լիցքերի կատարում; վերադրի կող ծածկապատերի նոր տաշ և շար: կրաշաղախով լիցքերի իրականացում)՝ 16,000,000 դրամ, 5. Տամիքածածկերի քարային աշխատանքներ (տամիքածածկերի տու. ֆե ծածկապատերի նոր տաշ և շար; քանոնվող քիվերի քանոնան-վերաշարում; կրաշաղախով)՝ 17,000,000 դրամ, 6. կրաշաղախի սրվածում; պատերի կարմունների կարմանացում կրաշաղախով՝ 3,000,000 դրամ, 7. կրաշաղախի ծեք բերում և ներմուծում՝ 11,000,000 դրամ 8. Պատուհանների պատրաստում և տեղադրում (Եկեղեցու կրանայան, Արևելյան, Հարավային և Հյուսիսային ձախարների հին պատուհանների փոխարինում նորով; պատուհանների կրակային քարերի հեռացում և փոխարինում նոր տու. ֆե քարից տաշ ու շարով; լիցքերի կատարում կրաշաղախով)՝ 2,000,000 դրամ 9. Դռների պատրաստում և տեղադրում (դուռ գալորամանշուղ թրճված ապակուց; վերադրի թրճված ապակուց)՝ 3,000,000 դրամ, 10. Դարձնագործ խաչի պատրաստում և տեղադրում՝ 1,000,000 դրամ 11. Դարձնագործ քանի պատրաստում և տեղադրում (չեխոստաղապատից; միացումը հարողաղախներով)՝ 2,500,000 դրամ
--	---

ՀՀ, Երևան
 Հրայր և Աննա Հովհաննիսյան
 Ֆաունդեյշն Կորպորացիայի
 Մասնաճյուղ
 RA, Yerevan
 The Hrair and Anna
 Hovhannissian Foundation Branch
 01555988

2/3

<p>12. Ղապի դարբնագործ ճաղերի պատրաստում և տեղադրում՝ 1,000,000 դրամ, 13. Եվեղեցու կնացում ներսից և դրսից, շին աղբի հեռացում՝ 2,500,000 դրամ:</p>	<p>Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: ԲԳ մշակույթի նախարարություն և Երևանի քաղաքապետարան: ԲԳ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:</p>
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր</p>	<p>Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ:</p>	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ:</p>
<p>13. Ծրագրի արդյունավետության միատման վերահսկողության մեխանիզմների մկարագրությունը:</p>	<p>Ծրագրի արդյունավետության միատման վերահսկողության մեխանիզմների մկարագրությունը:</p>

ՀՀ, Երևան
Հրայր և Աննա Հովնանյան
Տեսանկյուն կորպորացիայի
Հասցե՝ Կոմիտասի
Մայրուհիի Սահյա
Մեկիցյան
Ք.Պ.Ն.Ն.Ն.Ն.Ն.
The Hrair and Anna
Hovnanian Foundation Branch
01555988

Ծրագրի պատասխանատու



0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

27.01.2016թ. № 07/80-Մ/2549-1

Ձեր № _____

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 22.01.2016թ. № 15/15.6/758-16 գրության՝ կապված «Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին» առաջարկում ենք ներկայացված ծրագրի 10-րդ կետում ըստ արժեքների հստակորեն տարանջատել հանրապետությունում ձեռքբերվելիք և արտերկրից ներկրվող ապրանքներն ու ծառայությունները միմյանցից:

Հարգանքով

Ատոմ Զանցուղայան

Կառարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-436

034/2161-16
27.01.2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան 1
Հեռ. 011 800077

№ 06/3-Յ/2156-16
26.01.2016թ.

2/3

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.01.2016թ. թիվ 15/15.6/758-16 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

ԳԻՀԿՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/1935-16
26.01.2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ 2/3

0078 Երևան, Հայաբյան 41 Պ, հեռ. 380-240
էլ. փոստ suren.krmoyan@justice.am

№ 04/14/795-16
«29» 01 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն «Հ կառավարության 2016 թվականի հունվարի 22-ի 15/15.6/758-16 հանձնարարականի» հայտնում ենք, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագիրը համապատասխանում է «Հ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Jan 29 2016 5:30 PM

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
«Հ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն»
Հեռ. (010) 380-227

035/2361-16
29.01.2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N 01/3.1/2016-16 "29" հունվարի 2016 թ.

2/3

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պրն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2016 թ. հունվարի 22-ի N 15/15.6/758-16 գրության՝ հայտնում ենք, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք և առաջարկում ենք այն որակել որպես բարեգործական:

Հարգանքով՝

Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

Մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչություն
Կար.՝ Ռ. Կիչյան
Հեռ.՝ 011-56-40-50

011/2310-16
29.01.2016թ.



2/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲԱԴԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

29.01.2016թ. 06/18.1/366-16

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

2016 թվականի հունվարի 22-ի
N 15/15.6/758-16 գրություն

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը դիտողություններ ու առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Արամ ԲԱԴԱԼՅԱՆ

Իրավաբանական վարչություն
Խաչատուր Ղաթախյան (011) 621-737

011/2311-16
29.01.2016թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևանի կաթոլիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ</p>	
<p>առաջարկում ենք ներկայացված ծրագրի 10-րդ կետում ըստ արժեքների հտապորեն տարանջատել հանրապետությունում ձեռքբերվելիք և արտերկրից ներկրվող ապրանքներն ու ծառայությունները միմյանցից:</p>	<p>Հաշվի է առնվել:</p>

2/3



THE HIRAIR and ANNA HOVNANIAN FOUNDATION, INC

2/3


«04» փետրվար, 2016թ.

ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պրն. Տեր-Սիմոնյան,

Հայտնում ենք, որ ՀՀ Ֆինանսների նախարարության 27.01.2016թ. N 07/80-2/2549-16 գրությանը արված առաջարկը հաշվի է առնված մեր կողմից:

«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիան կներմուծի միայն ծրագրի 10-րդ կետի 7-րդ ենթակետում նշված կրաշաղախը: Ներկայացնում ենք ծրագրի լրամշակված տարբերակը:



«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն կորպորացիայի» մասնաճյուղի տնօրեն

188

094-2932
04 02 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— փետրվարի 2016 թվականի N Մ -
քաղ. երևան -Ա

2/4

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՎԱՆԱԾՈՐԻ «ՏԱՐՈՆ - 3» ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔ
12 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 07/80-Չ/16 և փետրվարի -ի N 06/-/16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 02/14/-16, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 16 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի փետրվարի -ի N -16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 83,301,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքը 12 բնակարանի վերակառուցման» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.


2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Վանաձորի քաղաքապետին:

Հ Ա Ս Ս Տ Ա Տ Վ Ա Ս Ս Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործառնականության շ. Ստեփանյանի կողմից

«26» հունվարի 2016 թ.



«Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքը 12 բնակարանի վերակառուցման» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Վանաձորի տեղակային ավանների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում՝ գյուղություն ունեցող կիսակառույց շենքը տասներկու բնակարանի վերակառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Անկնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, սուրբերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Մարջակ» ազգային-բարեգործական հասարակական կազմակերպություն՝ 48,150,000 դրամ, Վանաձորի քաղաքապետարան՝ 20,000,000 դրամ: «Տուվեր» տնաշինական կենտրոն, Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպություն՝ 9,100,000 դրամ: ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ 6,051,000 դրամ:
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Վանաձոր քաղաքի «Տարոն-3» թաղամաս քաղաքաշինության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	83,301,000 դրամ, հարկային արտոնություն է ակնկալվում 63,301,000 դրամից:

2/4

7.	Բարեգործություն ստացողը	Վանաձորի ժամանակավոր տնակներում ապրող ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվելու է Վանաձորի քաղաքապետարանի տրամադրած ցուցակների հիման վրա «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի, «Կամիջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն և «Տուլլեր տնաշինական կենտրոն, Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համատեղ ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում: Բնակարանները շահառուներին հանձնվում են սեփականության իրավունքով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2016 թվականի մարտի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով՝ վերականգնման-շինարարական աշխատանքներ - 01.03.2016 թ. - 31.11.2016 թ.: 83,301,000 դրամ: Գոյություն ունեցող կիսակառույցի (առկա են 1-ին և 2-րդ հարկի պատերը և 1-ին հարկի ծածկը) վրա ավելացվելու է 3-րդ հարկ և յուրաքանչյուր հարկում ստացվելու են չորսական բնակարան:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների իրականացում՝ 77,253,000 դրամ, - ցեմենտի ձեռք բերում՝ 2,700,000 դարմ, - փրփրապատտե բլոկների ձեռք բերում՝ 1,830,000 դրամ, - չնայատեսված ծախսեր՝ 1,518,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարան, որն այս նպատակով տրամադրել է կիսակառույց շենք, ինչպես նաև իրականացնելու է արտաքին կանոնիկացիաները:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

2/4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ Ն ԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

2/4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

09.02.2016թ. № 07/ՅՕ-2/4388-1

Ձեր № _____

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.02.2016թ. N 15/15.6/1371-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքը 12 բնակարանի վերակառուցման» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրի 9-րդ կետում ամրագրել նշված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը՝ այն համապատասխանեցնելով ծրագրի 6-րդ կետում նախատեսված ծրագրի բյուջեին, ինչպես նաև առաջարկում ենք հստակորեն տարանջատել ծրագրի 10-րդ կետում ծառայությունների և ապրանքների ձեռքբերման գործարքների արժեքները միմյանցից:

Հարգանքով

Ատոմ Զանչուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011-910-437

034/3361-16
09.02.2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

№ 06/3-3/4204-16
09.02.2016թ. 2/4

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 03.02.2016թ. N15/15.6/1371-16 գրությանը կից ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող
«Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքը 12 բնակարանի
վերակառուցման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Նախագծին կից ներկայացված ծրագրի իրականացման ժամկետը նախատեսվել
է 2016թ. մարտի 1-ից մինչև 2016թ. նոյեմբերի 31-ը: Միաժամանակ ծրագրի 9-րդ կետով
սահմանվել է, որ ծրագիրն իրականացվելու է 1 փուլով՝ 01.11.2015թ-ից մինչև
31.11.2016թ-ը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ ծրագրի շրջանակներում իրականացվող
աշխատանքների ժամկետները համապատասխանեցնել ծրագրի ժամկետին:

Հարգանքով՝

Վ.Միրոմյան

ԳՄՀԱ քաժին, Ն.Քեօնյան
011-800-329

034/3283-16
09.02.2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0078, Երևան, Հալաբյան 41^ա, հեռ.380-385
Էլ. փոստ vigen.kocharyan@justice.am

05.02.2016թ. N 03/14/1104-16

Ձեր N _____

2/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 3-ի
15/15.6/1371-16 հանձնարարականի՝ հայտնում եմ, որ «ԱՌԴԱ» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում
կիսակառույց շենքը 12 բնակարանի վերակառուցման» ծրագիրը
համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի
«Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաչիոյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. //010/380-227

035/2939-16
05.02.2016թ.



2/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք. Երևան, Հանրապետության իրավաբանական կառավարական տուն 3
www.mnurban.am, E-mail: info@mnurban.am

11.02.2016թ. N 06/18.1/606-16

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի
պարոն Սիմոն ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

2016 թվականի փետրվարի 3-ի
N 15/15.6/1371-16 գրություն

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող
